

Հայ Աւետարանական
Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան

Աշակերտական Օրէնքներ Նախակրթարան

“Երիտասարդը ի՞նչով մաքրէ իր ճամբան:
Քու խօսքիդ համեմատ անոր զգուշութիւն ընելով:”

Սաղմ. 119.9

Tel: 01/442594 - Fax 01/562155

Բովանդակություն

1. Վարժարանիս առաքելությունը
2. Պաշտամունք
3. Ժամանակացոյց
4. Բացակայություն
5. Հաղորդակցություն
6. Նախնական ինամք
7. Այցելություն
8. Ծնողական հանդիպումներ
9. Գրախանութ եւ գիրքերու վաճառք
10. Ուտեստեղէնի վաճառք
11. Համագգեստ եւ արտաքին երեւոյթ
12. Կարգապահություն
13. Գրաւոր ստուգում եւ քննություն
14. Կարգափոխութեան եւ վերաքննութեան պայմաններ
15. Ծնողաց Յանձնախումբ
16. Արտադասարանային գործունէութիւններ
17. Ատենամարզանք / Պտոյտներ ու այցելութիւններ
18. Կարելոր յիշեցումներ
19. Հոգեբանին դերը
20. Աշակերտը հետազօտող խմբակ
21. Ուսումնական յատուկ կարիքներ ունեցող աշակերտներու բաժանմունք



Միրելի ծնողք,

Կը խնդրենք որ այս շրջաբերականը ուշադրութեամբ կարդաք, դուք ալ ձեր կարգին բացատրէք ձեր զակին, պահէք զայն, որպէսզի մերթ ընդ մերթ կարդալով վերյիշէք անոր բովանդակութիւնը: Ձեր համագործակցութեամբ, կը նպաստէք Նախակրթարանի կարգ ու կանոնի պահպանման:

1.- Հ.Ա.Կ.Բ. Վարժարանի Առաքելութիւնը

Հ.Ա.Կ.Բ. Վարժարանի առաքելութիւնն է պատրաստել տիպար հայորդիներ ու քաղաքացիներ, անոնց ջամբել ազգային, հոգեւոր, մտաւոր ու բարոյական արժէքներ, զինել զանոնք կրթական բարձր մակարդակով, որպէսզի անոնք առաւելագոյն չափով կարենան յաղթահարել ապագայի մարտահրաւերները:

Վերամուտի սեմին ձեզի կը ներկայացնենք վարժարանիս առնչուող տեղեկութիւններ եւ օրէնքներ, որոնց կիրարկումով կարելի պիտի ըլլայ առաջքը առնել հաւանական անպատեհութիւններու: Կը հաւատանք, որ այս բոլորը կ'իրականանան միայն դպրոց-ծնողք-աշակերտ եռանկիւնին միջեւ կայացած գործակցութեամբ ու հասկացողութեամբ:



2.- Պաշտամունք

Նախակրթարանի աշակերտները շաբթուան ընթացքին երեք առաւօտներ կը հաւաքուին «Յիշատակի Սրահ» եւ կ'ունենան իրենց պաշտամունքները, որոնց ընթացքին կ'երգեն հոգեւոր երգեր, կը սորվին սաղմոսներ եւ լսեն դաստիարակիչ ու բարոյական խրատներ: Մնացեալ երկու առաւօտներուն անոնք կը մնան իրենց դասարաններուն մէջ, ուր առիթ կ'ունենան դաստիարակին հետ խորհրդակցելու իրենց հետաքրքրող նիւթերուն մասին:



3.- Ժամանակացոյց

- Դպրոցի դռները կը բացուին առաւօտեան ժամը եօթին ու կը փակուին Երեքշաբթի, Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը յետմիջօրէի ժամը երեքին քառորդ մնացած, իսկ Երկուշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը երկուքին: Անձնական միջոցով տեղափոխուող աշակերտները երբ յաճախակի ուշանան առաւօտեան պաշտամունքներուն կրկնակի նկատողութիւններէ ետք, առաջին պահուան դասապահէն կը զրկուին: Արձակման ժամուն հսկողութիւնը կը շարունակուի յաւելեալ տասնհինգ վայրկեան: Ճշդուած ժամէն ետք դպրոցը հսկողութեան միջոցառում չունի: Երթելէկի ընթացքը դիրացնելու համար ծնողք պարտին ճշդապահ ըլլալ:
- Առաւօտեան Նախակրթարանի մուտքի դուռը կը բացուի ժամը 7:25-ին: Ծնողք պարտին իրենց զուակներուն պայուսակները յանձնել իրենց զուակներուն, որոնք շարուելէ ետք պիտի բարձրանան դասարան:
- Ուսուցիչներու կամ պատասխանատուներու հետ կարելի է հանդիպիլ ժամադրութեամբ, զբօսանքներու ընթացքին՝ ժամը 10:20 – 10:40 կամ 12:10 – 12:30.
(Ժամադրութեան համար հեռաձայնել վարժարանիս քարտուղարութեան՝ 01-442594 թիւին)

- Օրուան դասացուցակը, պարտականությունները, գրաւորները, բացակայութիւնն ու կարգապահական նկատողութիւնները կը տեղադրուին վարժարանիս e-skool կայքէջին վրայ, որպէսզի ծնողք կարենան մօտէն հետեւիլ իրենց զաւակներուն դասերուն եւ ընթացքին:
- Կրթաթոշակի կամ այլ նիւթական հարցերու համար դիմել հաշուապահութեան գրասենեակ:
- Պաշտօնական հաստատագիր ստանալու համար դիմել քարտուղարութեան. պատրաստութեան համար նկատի ունենալով երկու օր, փոխարժէք՝ 10.000 լ.ն. :



4.- Բացակայութիւն



Բացակայութեան պարագային ծնողք պարտին նոյն օրն իսկ հեռաձայնելով տեղեակ պահել քարտուղարութիւնը կամ նախակրթարանի պատասխանատուն: Հաստատելու համար աշակերտին բացակայութիւնը նոյն օրը ծնողները իրենց բջիջային հեռաձայններուն վրայ կը ստանան իրենց զակին բացակայելու լուրը: Աշակերտին բացակայութիւնը կը նշուի նաեւ e skool-ի վրայ: Եթէ ծնողք հեռաձայնած են կը նշուի “Justified”, այլապէս “Unjustified”.



5.- Հաղորդակցութիւն

- Անօրեայ հաղորդակցութեան կապը ծնողներուն եւ դպրոցին միջեւ կայքէջն է: e skool – ի միջոցով ծնողք տեղեակ կ'ըլլան իրենց զակին բացակայութեան, անօրեայ դասացուցակին գրաւորներու նիշերուն կամ կարգապահական հարցերու մասին: Յայտարարութիւնները կը տեղադրուին նաեւ վարժարանիս դիմատետրին վրայ:

Հաղորդակցութեան Միջոցներ

- Վարժարանիս պաշտօնական կայքէջն է www.aechs.com
- Դիմատետրի էջն է՝  Central High School - Ashrafieh
-  Central_high_school_ashrafieh



6.- Նախնական Խնամք

- Արկածի մը պարագային, դպրոցը կու տայ նախնական եւ անմիջական խնամք: Նկատի առնելով, որ մեր աշակերտները ապահովագրուած են, լուրջ բժշկական խնամքի պարագային ծնողք տեղեակ կը պահուին եւ աշակերտը հիւանդանոց կը տեղափոխուի:



7.- Այցելութիւն

- Առանց պատասխանատուի ցուցմունքին եւ արտօնութեան կարելի չէ դասարանները այցելել:
- Եթէ ձեր զաւակը որեւէ պատճառով դպրոցը պիտի ձգէ, հարկ է նախակրթարանի պատասխանատուն տեղեակ պահել:



8.- Ծնողական Հանդիպումներ

- Ուսումնական տարեշրջանի նախօրեակին առաջին դասարանի ծնողները կը հրաւիրուին ծանօթացման հանդիպում մը, ուր դասատու ուսուցիչներ մանրամասն կը բացատրեն իրենց դասաւանդման ձեւը եւ կարգապահական օրէնքներու կիրարկումը:
- Վերամուտէն երկու շաբաթներ ետք տեղի կ'ունենան Նախակրթարանի երկրորդ եւ երրորդ դասարաններու ծնողական հանդիպումը, ապա չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դասարաններու հանդիպումը:
- Ա. քառորդի վիճակացոյցները ծնողներուն կը յանձնուի քառորդի աւարտէն ետք եւ նոյն օրը ծնողները առիթ կ'ունենան տեսակցելու ուսուցիչներուն հետ եւ քննարկելու իրենց զակին ուսումնական վիճակը: Յաջորդող քառորդներուն վիճակացոյցները կը տրուին աշակերտներուն: Միջիններու գնահատանքը կը կատարուի ստորեւ տրուած արժեւորումով:-

<i>Դասարան</i>	<i>Բարձր Պատուոյ Յիշ.</i>	<i>Պատուոյ Յիշ.</i>	<i>Յիշատակութիւն</i>
Երկրորդ, երրորդ	95 եւ բարձր	94.99 – 92.00	89.99 – 89.00
2.4-րդ, 5-րդ եւ 6-րդ	93 եւ բարձր	92.99 – 90.00	89.99 – 89.00

Առաջին դասարանին գրաւորներու եւ վիճակացոյցի արժեւորումը կը գնահատուի ABC արժեքներով:

- Որեւէ հարցի պարագային պէտք չէ սպասել ընդհանուր ժողովներուն, այլ կապ հաստատել նախ խնդրոյ առարկայ ուսուցիչին հետ, ապա նախակրթարանի պատասխանատուին յետոյ տնօրէնութեան հետ:
- Կը խնդրուի ուսուցիչներու տունները կամ բջիջային հեռաձայններուն չհեռաձայնել / կամ whatsapp-ի միջոցով կապ չհաստատել անոնց հետ դպրոցական ժամերէն դուրս:



9.- Գրախանութ եւ գիրքերու վաճառք

- Տարեշրջանին աւարտին աշակերտներուն վիճակացոյցներուն հետ ծնողներուն կը փոխանցուին դասարանային կարգով գրախանութ այցելելու թուականները եւ գիրքերու ցանկը:
- Ճշդուած օրը ծնողք կրնան ստանալ նաեւ դպրոցական համազգեստն ու մարզանքի տարազը:
Այդ օր վճարում տեղի չունենար: Հաստատագրով մը ծնողները կը տեղեկանան գիրքերու համար վճարուելիք գումարները, որ կ'աւելնայ աշակերտին կրթաթոշակին վրայ եւ միասնաբար բաժնուելով ինը մասերու, ամսական դրութեամբ կը վճարուի դրամատան մէջ:



10.- Ուտեստեղէնի վաճառք

Վարժարանիս երկու խաղավայրերը օժտուած են կրպակներով, ուր ամէնօրեայ դրութեամբ կը վաճառուի տարբեր տեսակի խմորեղէններ, տուրմ ... Չորեքշաբթի օրերը ստանցնած է վարժարանիս Ծնողաց Յանձնախումբը եւ կը սպասարկէ ակրատի (sandwich) տարբեր տեսակներ, Hamburger, Pasta ...

Ընպելի ջուրը քննուած է մասնագէտներու կողմէ եւ կ'ամբողջացնէ մաքուր ընպելի ջուրի պայմանները:



11.- Արտաքին Երևույթ

ՀԱՄԱԶԳԵՍՏ

Տղաք

- . լազուարթ տաքատ (դպրոցէն)
- . լազուարթով գինեգոյն կարճ թելով polo` ամրան եւ գարնան, երկար թելով` աշնան եւ ձմրան

- . գինեգոյն “գազակ”` ձմրան
- . լազուարթ pull-over
- . մութ գոյնի վերարկու առանց նկարի եւ գրութեան (ոչ դպրոցէն)
- . սեւ, սրճագոյն կամ լազուարթ կօշիկ

Աղջիկներ

- . լազուարթ փէշ (դպրոցէն)
- . լազուարթով գինեգոյն կարճ թելով polo` ամրան եւ գարնան, երկար թելով` աշնան եւ ձմրան
- . գինեգոյն “գազակ”` ձմրան
- . լազուարթ pull-over
- . մութ գոյնի վերարկու առանց նկարի եւ գրութեան (ոչ դպրոցէն)
- . սեւ, սրճագոյն կամ լազուարթ ոչ բարձրակրունկ կօշիկ
- . ճերմակ կամ լազուարթ գուլպայ կամ լազուարթ collant, (ոչ բարակ)
- *. **Թելադրելի է որ տարագներուն վրայ աշակերտին անունը կարուի**
- . **Զարդեղէն կրելը բացարձակապէս արգիւում է, բացառութիւն են միայն շատ նուրբ ու մանր օղերը:**

ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԶ

Դպրոցին կողմէ տրամադրուած մարզական տարագները պարտաւորիչ են: Միայն մարզանքի տարագին հետ արտօնուած է մարզական կօշիկ “tennis shoes” հագնիլ:

ՄԱԶ

- Տղաք`** . Աշակերտավայել, **հաւասար եւ կարճ կտրուած:**
- . Ներկուած եւ **jel**-ով յարդարուած մագ արգիւում է:

- Աղջիկներ`** . Կոկիկ սանտրուած կամ կապուած:
- . Աչքառու գոյներով եւ ձեւերով ծամակալներ գործածելը արգիւում է:
 - . Համազգեստի ներդաշնակ գոյներով մագակապեր կարելի է:
 - . Մազը ամբողջովին կամ փունջերով ներկելը խստիւ արգիւում է:



12.- Կարգապահություն

Վարժարանիս տնօրենության առաջադրանքն է դպրոցն ներս ստեղծել դաստիարակիչ մթնոլորտ ու ապահով միջավայր, ուր իւրաքանչիւր աշակերտ առիթ ունենայ մայրենի լեզուն անաղարտ պահելու, գիտելիքներու պաշարը ծաւալելու եւ ձեւաւորելու իր անհատականութիւնը:

Առ այդ աշակերտներէն կ'ակնկալուի՝

- Յարգանք ու պատշաճ վերաբերմունք ցուցաբերել իրենց դասընկերներուն, ուսուցիչներուն ու պատասխանատուներուն, ինչպէս նաեւ դպրոցական օրէնքներու նկատմամբ:

➤ Խախտումներ եւ պատժամիջոցի ընթացք

Խախտումներ

- 1-Ցուցմունքներու նկատմամբ անտարբերութիւն.
- 2-Շատախօսութիւն.
- 3-Ծաղրանք, ածականի կամ անունի կոչում.
- 4-Դասը ընդհատելու դիտումնաւոր ցանկութիւն.
- 5-Դասարանի մէջ թափարում.
- 6-Անցքերու մէջ վազվզումք.
- 7-Պարտականութեան թերացում.
- 8-Համազգեստի խախտում.
- 9-Ուսուցիչին հակադարձել, պատասխանել...
- 10-Աշխատանքէ հրաժարիլ.
- 11-Ստել, խաբել.
- 12-Առարկաներ նետել.
- 13-Դասընկերները հարուածել.
- 14-Կռուիլ.
- 15-Հայհոյել.
- 16-Անկիրթ ու անպարկեշտ վերաբերմունք ցուցաբերել.
- 17-Ուղղակի եւ կամայական անհնազանդութիւն ցուցաբերել դպրոցական օրէնքներուն.
- 18-Սպառնալ.
- 19-Առարկաներ իւրացնելու ձգտում ունենալ.
- 20-Գրաւորներու ընթացքին անպարկեշտ միջոցներու դիմել.

➤ Պատժամիջոցի ընթացք

Առաջին, երկրորդ եւ երրորդ դասարաններ

Առաջինէն երրորդ կարգի աշակերտներուն համար կը կիրարկուի դասարանէն ներս ճշդուած գնահատանքները, ուղղամիջոցները եւ պատժամիջոցները:
(Մանրամասնութիւնները կը փոխանցուին ծնողական հանդիպումին)

Երբ խախտումները յաճախակի ըլլան Նախակրթարանի պատասխանատուն կը տեղեկացնէ ծնողքը:

Չորրորդ, հինգերորդ եւ վեցերորդ դասարաններ

Իւրաքանչիւր դասարան ունի իր դասարանային օրէնքներու շարքը, գնահատանքի ձեւերը, ուղղամիջոցներն ու պատժամիջոցները:

Այս կարգերու աշակերտները խախտումներու պարագային կը ստանան նախ

Զգուշացում 1 դեղին թղթիկը, ապա

Զգուշացում 2 նարնջագոյն թղթիկը, եւ յետոյ

Զգուշացում 3 կարմիր թղթիկը,

Զգուշացումները կը ստորագրուին ծնողքին կողմէ եւ կը վերադարձուին դպրոց: Երբ խախտումները շարունակուին աշակերտը կը ստանայ **Ազդարարագիր** նամակ մը: Նամակէն ետք երբ խախտումները շարունակուին աշակերտը դպրոցէն կը կախակայուի մէկ օր:

Երեք կախակայումներէ ետք աշակերտին կը թելադրուի միջավայրը փոխել:

- Նախակրթարանի պատասխանատուին հայեցողութեան վստահուած է նաեւ հարկ եղած պարագային աշակերտը զրկել շաբթուան ատենամարզանքէն կամ արտադասարանային ձեռնարկի մը մասնակցելու իրաւունքէն:
- Վարժարանիս տնօրէնութիւնը կրնայ նաեւ աշակերտ կախակայել այսինքն՝ մէկ օրուան համար դպրոց չընդունիլ, երբ անոր կարգապահական ընթացքը ըլլայ անընդունելի եւ զայն բարելաւելու միջոցները սպառին:
- **Գնահատանքի կ'արժանանայ՝**

1-Յառաջադէմ աշակերտը.

2-Տիպար աշակերտը.

3-Բժախնդիի գիր ունեցող աշակերտը.

4-Ընթերցասէր աշակերտը.

5-Ծառայասէր աշակերտը.



13.- Գրաւոր ստուգում եւ քննութիւն

- Աշակերտին բերանացի թէ գրաւոր ստուգումներու արժեւորումը կը կատարուի 100-ի հիման վրայ: Անցման նուազագոյն նիշը 60 է:
- Գրաւորները նուազագոյն նիշ չունին, աշակերտը կը ստանայ այն ինչ որ աշխատած է: Կիսամեայ եւ ամապերջի միջիններու եւ քննութիւններուն նուազագոյն նիշը 30-է:
- Նախակրթարանի 1, 2 եւ 3 կարգերու աշակերտները կիսամեայ եւ ամապերջի քննութիւններէն զերծ կը մնան, իսկ 5-րդ եւ 6-րդ կարգերը French, Geography եւ Civics նիւթերու քննութիւններէն զերծ կը մնան:

- Սուրբ Գիրքի, Հայերենի եւ Հայոց Պատմութեան քննութիւններէն զերծ կը մնան այն աշակերտները, որոնք Ա. կամ Բ. կիսամեաներուն 90 եւ բարձր միջին կ'ապահովեն նշեալ նիւթերուն մէջ:
- Դասանիւթերու ընդհանուր միջինը կը գնահատուի դասապահերու շաբաթական թիւին հիման վրայ, այսպէս՝ շաբաթական չորս եւ աւելի պահերով դասաւանդուող նիւթերը 1 արժէք կ'էտ կ'ունենան, իսկ մնացեալները 1/2 արժէք կ'էտ: Սուրբ Գիրքն ու Հայերէնը որեւէ պարագայի կ'ունենան 1 արժէք կ'էտ:



14.- Կարգափոխութեան եւ Վերաքննութեան Պայմաններ

- Կարգը կը կրկնէ այն աշակերտը, որուն ձախողած դասերուն արժէք կ'էտերուն գումարը 3 կամ աւելի է կամ ընդհանուր միջինը 60-էն նուազ է:
- Աշակերտը առիթ կ'ունենայ վերաքննութիւն յանձնելու, երբ իր ձախող նիւթերուն արժէք կ'էտերը երեքէն նուազ են: Վերաքննութեան ստացած նիշը յաջորդող տարուան առաջին գրաւորի նիշ կը նկատուի: Այն աշակերտը, որ առանց բանաւոր պատճառի չի մասնակցիր վերաքննութեան այդ նիւթին մէջ կը ստանայ զերօ:
- Նոյն դասարանը երկու անգամ կրկնող աշակերտը կը դադրեցուի դպրոցէն:
- Արուեստի նիւթերն ու մարզանքը կ'արժեւորուին A, B, C արժեւորումով, բարձրագոյն արժէք նկատելով A-ը եւ չեն ներառուիր ընդհանուր միջինին մէջ:



15.- Ծնողաց Յանձնախումբ

Ծնողաց Յանձնախումբը կը բաղկանայ վարժարանիս ծնողները ներկայացնող ութ անդամներէ, որոնք կ'ընտրուին նշանակովի կամ քուէարկութեամբ: Յանձնախումբը Դեկտեմբերին կը կազմակերպէ ամանորեան տօնավաճառ, իսկ աւելի ուշ՝ գարնան նախաճաշ մը: Ձեռնարկներուն հասոյթը կ'աւելնայ Չորեքշաբթի օր իրենց կատարած ուտեստեղէնի վաճառքէն գոյացած գումարին վրայ եւ ամբողջութեամբ կը տրամադրուի վարժարանիս բարեկարգման:



16.- Արտադասարանային գործունէութիւններ

- Վարժարանս կը քաջալերէ եւ դաստիարակիչ կը նկատէ աշակերտներու համար կազմակերպուած արտադպրոցական գործունէութիւնները: Չմասնակցելու պարագային ծնողք պէտք է գրաւոր բացատրութիւն մը ներկայացնեն նախակրթարանի պատասխանատուին:

- Աշակերտները առիթ կ'ունենան մասնակցելու այլազան մրցումներու ինչպես՝ ուղղագրական, արտասանական, գծագրական, պարի, երգի եւ այլն: Վարժարանիս տնօրէնութիւնը կ'ընդառաջէ բոլոր մրցումներու հրաւերներուն, որովհետեւ կը հաւատայ որ անոնց ընդմէջէն աշակերտը ձեռք կը ձգէ ներ տեսակի փորձառութիւններ:



17.- Ատենամարզանք / Պտոյտներ ու Այցելութիւններ

Երեքշաբթի օրերը վերջին պահուն Նախակրթարանի բոլոր աշակերտները կը հաւաքուին «Յիշատակի Սրահ» ունենալու համար իրենց ատենամարզանքը: Ատենամարզանքի պահերը յատկացուած են յատուկ տօնակատարութիւններու, դաստիարակիչ եւ առողջապահական դասախօսութիւններու, ինչպէս նաեւ պտոյտներու կամ այցելութիւններու:

Այս պահուան ընթացքին տեղի կ'ունենան նաեւ «դասարանային ատենամարզանքներ»ը, որուն ծնողք նաեւ ներկայ կ'ըլլան եւ կը վայելեն իրենց զաւակներուն ձիրքերն ու տաղանդները:



18.- Կարենոր Յիշեցումներ

Օտոյներէն կ'ակնկալուի աչալուրջ հետեւիլ իրենց զակին՝

- Ֆիզիքական ընդհանուր մաքրութեան (եղունգ, ականջ, մազ ...), ինչպէս նաեւ անոնց կոկիկութեան ու բժախնդրութեան (համազգեստ, կօշիկ, գուլպայ ...)
- Աշակերտները իրենց գրպաններուն մէջ ունենալու են մի քանի թաշկինակ: Թելադրելի է, որ իրենց դարակներուն մէջ ալ ունենան տուփ մը թաշկինակ եւ խոնաւ թաշկինակ:
- Առաջին դասարանի պարագային իւրաքանչիւր աշակերտ հերթաբար ամբողջ դասարանին համար դպրոց պիտի բերէ տուփ մը թաշկինակ եւ խոնաւ թաշկինակ:
- Պայուսակներու ու թղթակալներու (file) դասաւորման համար թելադրելի է, որ աշակերտները ունենան շրջաբերականներու եւ գրաւորի սրբագրուած թուղթերու տարբեր թղթակալներ:
Ամէն օր ծնողք պարտին ստուգել իրենց զաւակներուն պայուսակները ու մաքրել զանոնք ուտելիքներու մնացորդներէ: Աշակերտները առաջին պահուան աւարտին ուտելու կարճ դադար մը կ'ունենան: Հետեւաբար, եթէ նոյնիսկ ձեռք զաւակը զբօսանքի ընթացքին պիտի գնէ իր ուտելիքը թելադրելի է, որ պզտիկ սանտուիչ մը ունենայ իր հետ այդ դադարին ուտելու համար:
Աշակերտները պարտին իրենց հետ ունենալ իրենց անհատական ջրամանը:



19.- Հոգեբան

Վարժարանիս հոգեբանը կարելու էր ունի իւրաքանչիւր աշակերտի առօրեային մէջ: Անոր աշխատանքը բազմաբովանդակ բնոյթ կը կրէ:

Ան մշտական, պարբերական ու անհատական հանդիպումներ կ'ունենայ աշակերտներուն հետ եւ ցուցմունքներ կը թելադրէ՝

- Կարգաւորելու համար յարաբերութիւններ,
- Լուծելու համար ներքին հոգեբանական հարցեր,
- Նուազեցնելու համար սեփական տագնապներ՝ ինչպէս անձկութիւն, վախ ...,
- Յաղթահարելու համար բաժանումի անձկութիւնը եւայլն:

Հոգեբանը հերթական հանդիպումներ կ'ունենայ նաեւ ուսուցիչներու եւ ծնողներու հետ քննարկելու համար աշակերտին յառաջդիմութիւնը եւ փոխանցելու համար հարկ եղած ցուցմունքներն ու թելադրանքները:

Ան մաս կը կազմէ “Աշակերտը Հետազոտող Խմբակին” (Student Study Team):



20.- Աշակերտը Հետազոտող Խմբակ (Student Study Team)

- Այս խմբակին մաս կը կազմեն աշակերտին դաստիարակը, դասատու կարգ մը ուսուցիչները, դպրոցին հոգեբանը եւ աւելի ուշ ծնողքը: Այս խմբակը կը միտի մօտէն հետեւիլ եւ բարելաւել աշակերտին ուսումնական գործընթացը եւ վարուելակերպը:



21.- Ուսումնական Յատուկ Կարիքներ Ունեցող Աշակերտներու Բաժանմունք

Վարժարանէն ներս կը գործէ ուսման յատուկ կարիք ունեցող աշակերտներու բաժանմունք (Մանկապարտեզէն՝ Միջնակարգ)

Այս բաժանմունքի ծրագիրը յատուկ է այն աշակերտներուն համար, որոնք կը դիմագրաւեն՝

- Ընթերցանութեան եւ գրաւոր արտայայտութեան դժուարութիւններ
- Ուշադրութեան եւ կեդրոնացումի դժուարութիւններ
- Ընկերային յարաբերութիւններու եւ զգացական դժուարութիւններ:

Գործակցութեան լաւագոյն բարեմաղթութիւններով՝